# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

Դատական դեպարտամենտի կարիքների համար փաստաթղթերի ոչնչացման սարքերի և հեռախոսային սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/11» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«17» մայիսի 2024թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Արթուր Ասատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

*հանձնաժողովի անդամներ՝*

**Խորեն Պետրոսյան՝** Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության պետի ժամանակավոր պաշտոնակատար

**Նորայր Աղամալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

**Տիգրան Զեյնալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Գայանե Դադիվանյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Նիստից բացակայում էր՝

**Սեդրակ Սարդարյան՝** Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

**1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/11» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում «Ի ՋԻ Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման և «Սիրրա» ՍՊԸ-ի, «Ի ՋԻ Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի հայտերի գնահատման արդյունքների վերաբերյալ.**

1.1. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է «Ի ՋԻ Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի կողմից հայտի շտկման նպատակով ներկայացված փաստաթուղթը՝ էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1), ինչպես նաև eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը, ֆիրմային անվանումները, մոդելները, արտադրողների անվանումները (այսուհետ՝ առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրեր):

2-րդ չափաբաժնի մասով «Ի ՋԻ Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի կողմից հայտով առաջարկվել է «Հեռախոս՝ Panasonic KX-TS2350 (KX-TS500)»: Հրավերով սահմանվել է՝ «Հեռախոս՝ Panasonic KX-TS2350 կամ General Elektrik GE-2-9233A կամ Samsung SLT SMT-P2100D»:

Գնահատող հանձնաժողովը որոշեց, որ «Ի ՋԻ Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի կողմից հայտով առաջարկված «Հեռախոս՝ Panasonic KX-TS500»-ը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «Ի ՋԻ Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի կողմից՝

- ներկայացված հայտում առկա փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան (էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարության 2)-րդ կետի երրորդ պարբերությամբ նախատեսված աղյուսակում նշված տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել, քանի որ հրավերով հիշյալ աղյուսակի լրացման պահանջ սահմանված չէ) և գնահատվում են բավարար,

- 2-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ «Panasonic KX-TS2350» հեռախոսի մասով համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին և գնահատվում է բավարար, իսկ «Panasonic KX-TS500» հեռախոսի մասով չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին և գնահատվում է անբավարար,

- 3-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին և գնահատվում է բավարար:

1.2. Գնահատող հանձնաժողովը որոշեց 2-րդ չափաբաժնի մասով «Ի ՋԻ Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը Համակարգում գնահատել բավարար՝ կատարելով համապատասխան նշում, որ 2-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը «Panasonic KX-TS2350» հեռախոսի մասով համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին և գնահատվում է բավարար, իսկ «Panasonic KX-TS500» հեռախոսի մասով չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին և գնահատվում է անբավարար:

1.3. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Սիրրա» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունները, հանձնաժողովը որոշեց.

- «Սիրրա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը 1-ին չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**2. Տվյալներ՝ ընտրված մասնակցի, մերժված հայտերի և գնման ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ.**

2.1. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

**- 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով «Ի ՋԻ Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,**

- 2-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ Շուշան Տեխնիկս ՍՊԸ-ի, Էյչ Գրուպ ՍՊԸ-ի, «ԿՈՄՊԳԱՐԱՆՏ» ՍՊԸ-ի, «ՄԻՌՌՈՌՍ» ՍՊԸ-ի, «Սիրրա» ՍՊԸ-ի, ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ ՍՊԸ-ի հայտերը մերժել,

- 3-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ Էյչ Գրուպ ՍՊԸ-ի, «Սիրրա» ՍՊԸ-ի, ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ ՍՊԸ-ի հայտերը մերժել:

2.2. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

- գնման ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա,

- 1-ին չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ Մայ Մարկետ ՍՊԸ-ի, «Ի ՔԻ Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի, «ՄԻՌՌՈՌՍ» ՍՊԸ-ի, «ԿՈՄՊԳԱՐԱՆՏ» ՍՊԸ-ի, Սմարթլայն ՍՊԸ-ի, ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ ՍՊԸ-ի հայտերը մերժել:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**3. Հանձնաժողովը որոշեց՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:**

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Խորեն Պետրոսյան

_____ Նորայր Աղամալյան

_____ Տիգրան Զեյնալյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դադիվանյան